

ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ

2020-2022

**ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ
ԵՎ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ**

1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականությունը ՀՀ կառավարության տնտեսական քաղաքականության առանցքային ուղղություններից մեկն է, որն ուղղված է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, կարգավորող միջավայրի թափանցիկության բարձրացմանը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտմանը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացմանը, շուկայական ենթակառուցվածքի զարգացմանը, և այդ բոլորի հիման վրա՝ տնտեսական զարգացման խնդրի ապահովմանը:

Նպատակ ունենալով ներդրումային քաղաքականության արդյունավետ իրականացման՝ Հայաստանի Հանրապետությունը հայտարարել և իրականացնում է «բաց դռների» քաղաքականություն:

Աղյուսակ 1. 2016-2018թթ. օտարերկրյա ուղղակի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցություն (%)

	2016	2017	2018
ՕՈՒՆ¹/ՀՆԱ	2.6	2.0	2.1
աճը	-	-0.6	+0.1

Ներդրումային միջավայրի բարեփոխումների շրջանակում Միջազգային ֆինանսական կորպորացիան (ՄՖԿ) 2014-2017 թվականներին իրականացրել է Հայաստանում ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագիր:

2015 թվականի մարտի 18-ին Հայաստանի Հանրապետության կառավարության (ի դեմս՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության), Հայաստանի զարգացման հիմնադրամի և Միջազգային ֆինանսական կորպորացիայի միջև ստորագրվել է խորհրդատվական համաձայնագիր: Ծրագրի բյուջեն կազմել է՝ 1 500 000 ԱՄՆ դոլար, որից կառավարության ներդրումը՝ 150 000 ԱՄՆ դոլար:

Ծրագրի շրջանակում՝

- մշակվել է ներդրումային բարեփոխումների քարտեզը, իրականացվել է ՀՀ-ում օտարերկրյա ներդրողների շրջանում հետազոտություն՝ օտարերկրյա ներդրումների կատարման համար խոչընդոտները բացահայտելու նպատակով:

- Ներդրումային բարեփոխումների քարտեզի տրամաբանությամբ, հաշվի առնելով նաև հետազոտության արդյունքները, մշակվել և 2015թ. հոկտեմբերի 8-ին ՀՀ կառավարության կողմից հավանության է արժանացել ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգը և միջոցառումների ժամանակացույցը, որի իրականացման շրջանակում մշակվել է «Օտարերկրյա ներդրումների մասին» ՀՀ օրենքի նախագծի նոր խմբագրությունը՝ ՄՖԿ խորհրդատուների աջակցությամբ (տեղական և միջազգային փորձագետներ):

- Իրականացվել է ՀՀ-ից ձկնամթերքի և ջերմոցային գյուղատնտեսական արտադրանքի արտահանման շղթաների հետազոտությունները, ինչպես նաև պանրի արտադրության և արտահանման շղթայի հետազոտություն, որոնց ընթացքում կազմակերպվել են հարցազրույցներ մասնավոր ոլորտի և պետական հատվածի մասնակիցների, ինչպես նաև միջազգային դոնոր կազմակերպությունների հետ:

¹ Վերլուծության համար հիմք են հանդիսացել ՀՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հաշվի «ուղղակի ներդրումներ» տողի տվյալները:

Ուսումնասիրվել է ոլորտները կարգավորող իրավական դաշտը, ինչպես նաև փուլ առ փուլ վերլուծվել է վերոնշյալ շղթաների յուրաքանչյուր օղակում ծագող խնդիրները և ներկայացվել են դրանց հնարավոր լուծումները:

- Օտարերկրյա ներդրողների համար մշակվել է արտոնությունների համառոտ ցանկ, որում ներառված են արտոնությունների բովանդակության, տրամադրման գործընթացի և ժամկետների, արտոնություն տրամադրող մարմնի վերաբերյալ և այլ անհրաժեշտ տեղեկատվություն:

- Իրականացվել են աշխատանքներ ուղղված ներդրումային քաղաքականություն մշակող գերատեսչությունների կարողությունների զարգացմանը, մասնավորապես՝ կազմակերպվել են մի շարք սեմինարներ:

Նախատեսված էր, որ ծրագիրը կունենա շարունակական բնույթ:

2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Հայաստանում ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակներն են՝ ներդրումային միջավայրի բարելավում, օրենսդրական դաշտի կատարելագործում և Հայաստանի Հանրապետության տնտեսության մեջ ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների խթանում:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներդրումային ոլորտում առաջնորդվելու է ներդրումային գործունեության հետ կապված հարաբերությունների ազատականացման, օտարերկրյա ներդրողների նկատմամբ ազգային և առավել բարենպաստության ռեժիմների ամրագրման, ներդրումների պատշաճ պաշտպանության և միջազգային առաջադեմ պրակտիկայում ընդունված այլ սկզբունքներով:

Ներդրումային քաղաքականության կատարելագործմամբ կիրառործվեն հետևյալ նպատակները՝ ներդրողների համար առանցքային նշանակության ոլորտներ մուտք գործելու խոչընդոտների նվազում, ներդրողների պաշտպանվածության, երաշխիքների մակարդակի և օրենսդրական դաշտի կայունության բարձրացում, ավելի թափանցիկ, արդյունավետ և գործուն խթանների համակարգ, ինչի արդյունքում կարձանագրվի ներդրումների աճ:

Հետևաբար, ծրագրի իրականացումը Հայաստանում ներդրումային միջավայրի բարելավման միջոցով մեծապես կնպաստի երկրում ներդրումների (մասնավորապես՝ օտարերկրյա) աճին:

Նպատակը	Ծրագրի դասիչը և անվանումը	Ծրագրի վերջնական արդյունքները					Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը ²		Թիրախը		
			Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Ներդրումների (օտարերկրյա) աճ	Խորհրդատվական ծառայությունների տրամադրում	Օտարերկրյա ուղղակի ներդրումների կշիռը ՀՆԱ-ում	2.1%	2018թ.	2.5%	2020թ.	ՀՀ կառավարության՝ 8 փետրվարի 2019 թվականի N 65 – Ա ծրագրի «5.6. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՃԸ՝ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԱՃԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ»

² 2019 թվականի համար ՕՈՒՆ/ՀՆԱ ցուցանիշը կանխատեսվում է 2.3%:

3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Խորհրդատավական ծառայությունների տրամադրման ծրագիրը նախատեսվում է իրականացնել երկու ուղղություններով՝ Ներդրումային քաղաքականություն և խթանում և Արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորում:

Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար (ըստ գերակայությունների նվազման)	Հիմնավորում
<p>Ներդրումային քաղաքականության բարելավում և արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորում</p>	<p>Ներդրումային միջավայրի բարելավման, այդ թվում՝ ներդրումային քաղաքականության բարեփոխման գործընթացը սկսվել է ՄՖԿ հետ համատեղ իրականացված 2015-2017թթ. ծրագրի շրջանակում, որը ենթադրել է աշխատանքների շարունակականություն: Ուստի, այս առնչությամբ դեռևս անհրաժեշտություն կա նպատակաուղղված և հետևողական աշխատանք իրականացնելու՝ ներդրումների իրավական կարգավորման շրջանակի բարելավման և արդիականացման, թիրախավորված ոլորտներում օտարերկրյա ուղղակի ներդրումների ուսումնասիրության, ներդրումային միջավայրի խոչընդոտների բացահայտման և դրանց լուծման համար առաջարկությունների մշակման, ներդրումային խթանների մշակման և գործողների կատարելագործման, տնտեսական դիվանագիտության կարողությունների բարձրացման, Doing Business բարեփոխումների հուշագրի և զեկույցում ընդգրկված առաջնահերթ ոլորտների գործողությունների ծրագրի մշակման և իրականացման միջոցով, ինչը վերջին հաշվով հանգեցնելու է երկրում ներդրումների (մասնավորապես՝ օտարերկրյա) աճին:</p> <p>Նախատեսվում է նաև ընտրել արտահանման պոտենցիալ ունեցող մի քանի արտադրանքներ և իրականացել վերջիններիս վերլուծություն՝ բացահայտելու այդ արտադրանքների արտադրության և արտահանման հնարավորությունները: Այսինքն՝ աշխատանք է տարվելու մի շարք արտադրանքների արտահանման հնարավորությունների բացահայտման ուղղությամբ՝ այդ ոլորտում օտարերկրյա ներդրումների (մասնավորապես՝ օտարերկրյա) ներգրավման նպատակով:</p> <p>ՀՀ կառավարության՝ 8 փետրվարի 2019 թվականի N 65-Ա ծրագրի 5.5 և 5.6 կետեր</p> <p>ՀՀ կառավարության՝ 6 սեպտեմբերի 2018 թվականի N 1030-Լ 2018-2022թթ. գործունեության միջոցառումների ծրագիր, 229 և 230 կետեր</p>

4. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ

4.1 Պարտադիր և հայեցողական ծախսեր

Խորհրդատավական ծառայությունների տրամադրման ծրագրով նախատեսված միջոցառումները նախատեսվել են ինքնուրույնաբար, դասվում են հայեցողական ծախսերին, չեն կրում շարունակական բնույթ և նպատակ ունեն բարելավել ոլորտային՝ ներդրումային քաղաքականությունը:

Դասիչը		Միջոցառման անվանումը	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը
Ծրագիր	Միջոցառում				
Պարտադիր ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
-	-	-	-	-	-
Հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին դասվող միջոցառումներ, այդ թվում՝					
-	-	-	-	-	-
Շարունակական բնույթի հայեցողական ծախսերին չդասվող միջոցառումներ, այդ թվում՝					
Խորհրդատավական ծառայությունների տրամադրում		Ներդրումային և քաղաքականության բարելավում և արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորում	Հայեցողական պարտավորություններն ինքնուրույնաբար նախաձեռնվել են գործադիր մարմնի կողմից՝ նպատակ ունենալով ոլորտային քաղաքականության շրջանակում իրականացնել բարեփոխումներ		2019 թվականի փետրվարի 14-ին ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՄՖԿ միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր: Նախատեսվում է նաև ստորագրել միջազգային պայմանագիր՝ սույն հայտով ներկայացված ծրագրի իրականացման նպատակով:

4.2 Գոյություն ունեցող ծախսային պարտավորություններ

Ոլորտում այլ ծախսային ծրագրեր ներկայումս չեն իրականացվում:

4.3 Նոր նախաձեռնություններ

Պահանջվող տեղեկատվությունը ներկայացված է ՀՀ 2020-2022 թվականների պետական ՄԺԾԾ և ՀՀ 2020 թվականի պետական նյութի նախագծերի մշակման շրջանակներում պետական մարմինների բյուջետային հայտերի կազմման և դրանք ՀՀ ՖՆ ներակայցաման մեթոդական ցուցումների 2, 3, 4, 5, 6 հավելվածներով, ինչպես նաև այդ ցուցումների բաղկացուցիչ մասն հանդիսացող Բյուջետային ծրագրերի ծախսակազմման ընդհանուր ուղեցույցների 3, 4 և 7 հավելվածներով (կցվում են):

5. ՈՉ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ԱՐԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՍՊԱՍՎՈՂ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Ոլորտի (համակարգի) պետական հատվածից եկամուտներ (բացառությամբ պետական բյուջեից ստացվող եկամուտների) չկան

6. ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԸ/ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ծրագրով նախատեսված բարեփոխումների իրականացումն իր դրական ազդեցությունը կունենա Հայաստանի ներդրումային միջավայրի վրա՝ այն դարձնելով առավել գրավիչ, տեղական և օտարերկրյա տնտեսավարողների համար ապահովելով կանխատեսելի գործարար և ներդրումային միջավայր: Տարածքային (ըստ մարզերի) ներկայացում հնարավոր չէ:

7. ԱՐՏԱՔԻՆ ԱՂՔՅՈՒՐՆԵՐԻՑ՝ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԽՈՂՈՎԱԿՆԵՐՈՎ ՍՏԱՑՎՈՂ ՎԱՐԿԵՐԻ և ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՀԱՇՎԻՆ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԾՐԱԳՐԵՐ

Չկան

8. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

Մաս 3-ի հավելված 10-ի 2-րդ աղյուսակ և հավելված 11-ը չեն լրացվել, քանի որ ծրագիրը 2019 թվականի չի իրականացվել, հետևաբար չկա համեմատության բազա, և արտաքին աղբյուրներից բյուջետային խողովակներով ստացվող նպատակային վարկեր և դրամաշնորհներ չկան (կցվում է Մաս 3-ի հավելված 10-ի 1-ին աղյուսակ):

9. ՀԱՅՏԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

ՄԺԾԾ հայտի հետ կապված ռիսկեր չկան, հետևաբար համապատասխան աղյուսակը չի լրացվում:

Հավելված N 2. Նոր նախաձեռնությունների ներկայացման ձևաչափ

1. Պետական մարմինը		
1.1 Պետական մարմնի անվանումը՝ ՀՀ ՏՀՆՆ		
1.2 Նոր նախաձեռնությանն առնչվող այլ պետական մարմինների անվանումները՝ Չկան		
2. Ծրագիրը		
2.1 Ծրագրի անվանումը՝ Խորհրդատվական ծառայությունների տրամադրում		
2.2 Ծրագրի դասիչը՝ -		
2.3 <input checked="" type="checkbox"/> Նոր ծրագիր (հիմնավորումներ և բացատրություններ)՝ Ծրագրի իրականացումը ՀՀ ներդրումային միջավայրի բարելավելու միջոցով մեծապես կնպաստի երկրում ներդրումների (մասնավորապես՝ օտարերկրյա) աճին, ինչը ՀՀ կառավարության կողմից համարվում է առաջնահերթություն:		
3. Միջոցառումը		
3.1 Միջոցառման անվանումը՝ - ներդրումային քաղաքականության բարելավում և արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորում		
3.2 Միջոցառման դասիչը՝ -		
3.3 Միջոցառման (պետության միջամտության) տեսակը՝ <input type="checkbox"/> Ապրանք և ծառայություն <input type="checkbox"/> Տրանսֆերտ <input checked="" type="checkbox"/> Այլ (համաֆինանսավորում)		
3.4 <input checked="" type="checkbox"/> Նոր միջոցառում (հիմնավորումներ և բացատրություններ)՝ Ծրագրի իրականացումը ՀՀ ներդրումային միջավայրի բարելավելու միջոցով մեծապես կնպաստի երկրում ներդրումների աճին, ինչը ՀՀ կառավարության կողմից համարվում է առաջնահերթություն: <input type="checkbox"/> Գոյություն ունեցող միջոցառման ընդլայնում (հիմնավորումներ և բացատրություններ)՝		
3.5 Նոր նախաձեռնության ծախսերի հիմքում դրված պարտավորության բնույթը՝ <input type="checkbox"/> Պարտադիր ծախսային պարտավորություն <input checked="" type="checkbox"/> Հայեցողական ծախսային պարտավորություն, այդ թվում՝ <input type="checkbox"/> Շարունակական <input checked="" type="checkbox"/> Ոչ շարունակական		
Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունների շրջանակը	Պարտադիր պարտավորության շրջանակներում գործադիր մարմնի հայեցողական իրավասությունների շրջանակները	Պարտադիր կամ հայեցողական պարտավորությունը սահմանող օրենսդրական հիմքերը

<p>Միջոցառում 1.</p> <p>✓ Անվանումը՝ ներդրումային քաղաքականության բարելավում և արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորում</p> <p>✓ Նկարագիրը՝ ներդրումների իրավական կարգավորման շրջանակի բարելավում, թիրախավորված ոլորտներում ՕՈՒՆ ուսումնասիրություն, ներդրումային միջավայրի խոչընդոտների բացահայտում, ներդրումային խթանների մշակում, տնտեսական դիվանագիտության կարողությունների բարձրացում, Doing Business զեկույցում ընդգրկված ոլորտների գործողությունների ծրագրի մշակում, արտահանման պոտենցիալ ունեցող ընտրված արտադրանքների վերլուծություն</p> <p>✓ Շահառուների շրջանակը՝ օտարերկրյա և տեղացի ֆիզիկական և իրավաբանական անձինք</p>		<p>2019 թվականի փետրվարի 14-ին ՀՀ կառավարության՝ ի դեմս ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՄՖԿ միջև ստորագրվել է համագործակցության համաձայնագիր: Նախատեսվում է նաև ստորագրել միջազգային պայմանագիր՝ սույն հայտով ներկայացված ծրագրի իրականացման նպատակով:</p>
--	--	--

4. Նպատակը

Խորհրդատվական ծառայություններ տրամադրելու ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ավելացնել ՀՀ-ում ներդրումների (մասնավորապես՝ օտարերկրյա) ծավալները, ինչն իրականացվելու է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորման, կարգավորող իրավական դաշտի կատարելագործման, ՕՈՒՆ թիրախային ոլորտների ուսումնասիրության, ոլորտում խոչընդոտների բացահայտման միտցով, ինչը համահունչ է Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի գերակայություններին, ՀՀ կառավարության՝ 8 փետրվարի 2019 թվականի N 65-Ա ծրագրի 5.6. կետին, ՀՀ կառավարության՝ 6 սեպտեմբերի 2018 թվականի N 1030 - Լ 2018-2022թթ. գործունեության միջոցառումների ծրագրի 230 կետին և ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 8-ի նիստի N 45 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգին:

5. Նկարագրությունը

Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել գործողություններ, որոնք, նպատակ ունենալով նպաստել ներդրումային քաղաքականության բարելավմանն ու արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, իրենց մեջ ներառում են մի շարք ուղղություններ, մասնավորապես՝ ուղղված իրականացվելու են՝ ներդրումներին առնչվող իրավական ակտերի մշակում, Կառավարության մոնիտորինգի և գնահատման կարողությունների զարգացում, օտարերկրյա ուղղակի ներդրումների բարեփոխումների արդյունքների հաղորդակցում և տարածում, օտարերկրյա ուղղակի ներդրումների ուսումնասիրություն թիրախավորված ոլորտներում, համապատասխան գերատեսչությունների հետ պիլոտային ոլորտներում/ ենթաօլորտներում ներդրումային միջավայրի խոչընդոտների բացահայտում և դրանց լուծման համար առաջարկությունների մշակում, ներդրումային խթանների կատարելագործում, տնտեսական դիվանագիտության դասընթացների մշակում և իրականացում, Doing Business բարեփոխումների հուշագրի և զեկույցում ընդգրկված առաջնահերթ ոլորտների գործողությունների ծրագրի մշակում և իրականացման աջակցություն, խորհրդատվություն Doing Business աշխատանքային խմբին: Նախատեսվում է նաև ընտրել արտահանման պոտենցիալ ունեցող մի քանի արտադրանքներ և իրականացվել վերջիններիս վերլուծություն՝ բացահայտելու այդ արտադրանքների արտադրության (ներդրումներ ներգրավել այդ ուղղությամբ) և արտահանման հնարավորությունները:

6. Սպասվող օգուտները

Ծրագրի իրականացման արդյունքում ունենալու ենք բարելավված ներդրումային միջավայր, ինչի կապակցությամբ նախատեսվում է ավելացնել օտարերկրյա ուղղակի ներդրումներ/ՀՆԱ

հարաբերակցությունը 0.4 տոկոսային կետով (2018թ. ՕՈՒՆ/ՀՆԱ միջին ցուցանիշը կազմել է 2.1%, ինչը 2020 թվականին նախատեսվում է հասցնել 2.5%-ի, 2019թ.ի համար կանխատեսվում է 2.3%):					
7. Նոր նախաձեռնությունը չֆինանսավորելու դեպքում ծագող խնդիրները					
Ծրագրի չիրականացում:					
8. Արդյունքային չափորոշիչները	Չափի միավորը	2020թ.	2021թ.	2022թ.	Միջոցառման ավարտի տարեթիվը
ՕՈՒՆ/ՀՆԱ	%	2.5	-	-	2020
9. Պահանջվող ռեսուրսները	ՀՀ դրամ	2020թ.	2021թ.	2022թ.	Միջոցառման ավարտի տարեթիվը
75 000 000	X	X			2020
10. Ֆինանսավորման աղբյուրը	ՀՀ դրամ	2020թ.	2021թ.	2022թ.	Միջոցառման ավարտի տարեթիվը
Պետական բյուջե	X	X			2020
11. Արդյունքների այլ մակարդակներ արտահայտող այլընտրանքներ Այլընտրանք # 2 (նվազագույն արդյունքների սցենար)					
12. Նոր նախաձեռնության իրականացման այլ եղանակներ արտահայտող այլընտրանքներ Այլընտրանք # 3					
13. Այլ անհրաժեշտ տեղեկատվություն և հիմնավորումներ					
-					

Հավելված N 4. Բյուջետային ծրագրերի գծով ամփոփ ծախսերն ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների

Ծրագրային դասիչը	Ծրագիր /Միջոցառում	2018թ փաստ. (հազ. դրամ)		2019թ սպասվող (հազ. դրամ)		2020թ բյուջե (հազ. դրամ)			
		Ընդամենը	<Հոդվածի անվանումը և կոդը>	Ընդամենը	<Հոդվածի անվանումը և կոդը>	Ընդամենը	Ընթացիկ ծախսեր	Ընթացիկ ծախսեր	...
<Ծրագրի դասիչը>	Խորհրդատվական ծառայությունների տրամադրում					75 000	75 000		
<Միջոցառման դասիչը>	ներդրումային քաղաքականության բարելավում և արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորում					75 000	75 000		

Հավելված N 5. Բյուջետային ծրագրերի գծով ծախսերի բաշխումն ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման տարրերի

Ծրագրային դասիչը	Ծրագիր /Միջոցառում	Գործառնական դասակարգման			2018թ փաստ. (հազ. դրամ)	2019թ սպասվող (հազ. դրամ)	2020թ բյուջե (հազ. դրամ)
		Բաժին	Խումբ	Դաս			
<Ծրագրի դասիչը>	Խորհրդարվական ծառայությունների պրամադորում	X	X	X			
	ընթացիկ ներդրումային քաղաքականության բարելավում և արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորում				-	-	75 000

Հավելված N 6. Նոր նախաձեռնությունների ֆինանսավորման աղբյուրները (ամփոփ) և առաջնահերթությունները

Աղյուսակ 1. Նոր նախաձեռնությունների ֆինանսավորման աղբյուրները (ամփոփ)

(հազար դրամներով)

		2020թ.	2021թ.	2022թ.
1	Նոր նախաձեռնությունների գծով ընդհանուր ծախսերը	75 000	-	-
2	Նոր նախաձեռնությունների ֆինանսավորման այլ աղբյուրներ (տող 2.1 + տող 2.2.)	-	-	-
2.1	Այլ աղբյուրներից ակնկալվող ֆինանսավորում	-	-	-
2.2	Այլ ծրագրերից ակնկալվող ծախսային խնայողություններ	-	-	-
3	Նոր նախաձեռնությունների զուտ ազդեցությունը պետական բյուջեի վրա (ընդհանուր ծախս՝ հանած եկամտի այլընտրանքային աղբյուրներ և/կամ այլ ծրագրերից խնայողություններ) (տող 1 – տող 2)	75 000	-	-

Աղյուսակ 2. Նոր նախաձեռնությունների միջև առաջնահերթությունները

Ծրագրային դասիչը		Նոր նախաձեռնության (Ծրագրի/ միջոցառման) անվանումը	2020թ (հազ. դրամ)	2021թ (հազ. դրամ)	2022թ (հազ. դրամ)
Ծրագիր	Միջոցառում				
Հայեցողական ծախսերին առնչվող նոր նախաձեռնություններ					
		Խորհրդարվական ծառայությունների պրամադորում	75 000	-	-
		ներդրումային քաղաքականության բարելավում և արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորում			

ԾԱԽՍԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԸ

ԾԱԽՍԵՐԻ ՕԲՅԵԿՏԸ	Ծախսերի օբյեկտի տիպը	Ծախսերի օբյեկտի նկարագրությունը	Հիմնավորումներ
ներդրումային քաղաքականության բարելավում և արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորում	Միջոցառում	Ծախսերի օբյեկտ են դիտարկվել ծրագրի իրականացման արդյունքին նպատակաուղղված միջոցառումները	Ծախսերի օբյեկտ են դիտարկվել ծրագրի միջոցառումները, քանզի վերջիններիս իրականացմամբ է պայմանավորված ծրագրով նախատեսված բոլոր ծախսերը:

ԾԱԽՍԵՐԻ ՕԲՅԵԿՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱԽՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

Ծախսային տարրերի/ ռեսուրսների տիպը	Ուղղակի ծախսեր		Անուղղակի ծախսեր ծրագրի ներսում		Անուղղակի ծախսեր ծրագրից դուրս		Ստանդարտ ծախսեր	Բացատրություններ և մեկնաբանություններ
	Ֆիքսված ծախսեր	Փոփոխուն ծախսեր	Ֆիքսված ծախսեր	Փոփոխուն ծախսեր	Ֆիքսված ծախսեր	Փոփոխուն ծախսեր		
1	2	3	4	5	6	7	8	9
Ընթացիկ				X				Նախատեսվում է ծրագրի շրջանակում ըստ անհրաժեշտության և ըստ շահագրգիռների քանակի կազմակերպել տարբեր սեմինարներ, դասընթացներ, վերլուծություններ, միջազգային փորձագետների հետ հանդիպումներ, վերջիններիս կողմից խորհրդատվության տրամադրում:

ԾԱԽՍԵՐԻ ՕԲՅԵԿՏԻՆ ԱՌՆՉՎՈՂ ԾԱԽՍԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

(Ստուգաթերթ)

1. Նշել, թե որ ֆիսկալ տարիներն են ընդգրկվում ծախսակազմման տվյալ վարժության մեջ՝ 2020 թվական
2. Կազմակերպական կառուցվածքները և հաշվապահական հաշվառման առկա համակարգը թույլ է տալիս արդյոք հավաքագրել ծախսակազմման նպատակներին և տվյալ ծախսերի օբյեկտին առնչվող բոլոր ծախսերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ԱՅՈ <input type="checkbox"/> ՈՉ <input checked="" type="checkbox"/>

Եթե ոչ, ապա նշել, թե ինչպես է նախատեսվում հավաքագրել անհրաժեշտ տեղեկատվությունը՝

ՄՖԿ հաշվետվությունների հիման վրա

3. Ինչպիսի՞ տվյալներ են օգտագործվում առնչվող ծախսերը բացահայտելու համար՝

Փաստացի ծախսեր X Պատմական ծախսեր Նախահաշիվներ Կանխատեսումներ
Այլ (նկարագրել).....

Փաստաթղթավորվել են արդյո՞ք առնչվող ծախսերը , դրանց դասակարգումները և հիմնավորումները՝

ԱՅՈՒ ՈՉ X

4. Կանխատեսվող կամ նախահաշվային ծախսերի կիրառության պարագայում նկարագրել կիրառված տեխնիկան և բոլոր ենթադրությունները՝

.....

5 Առնչվող ծախսերը սահմանելիս հաշվի են առնվել արդյո՞ք ծախսերի օբյեկտի հետ կապված ուղղակի ծախսերը՝

ԱՅՈՒ X ՈՉ

6. Առնչվող ծախսերը սահմանելիս հաշվի են առնվել արդյո՞ք ծախսերի օբյեկտին առնչվող անուղղակի ծախսերը, որոնք ներառված են համապատասխան ծրագրում/միջոցառման մեջ՝

ԱՅՈՒ X ՈՉ

7. Առնչվող ծախսերը սահմանելիս հաշվի են առնվել արդյո՞ք ծախսերի օբյեկտին առնչվող անուղղակի ծախսերը, որոնք ներառված չեն համապատասխան ծրագրում/միջոցառման մեջ՝

ԱՅՈՒ X ՈՉ

8. Առնչվող ծախսերը սահմանելու և դասակարգելու համար կիրառվել է արդյոք դրա համար սահմանված փաստաթղթային ձևաչափը՝

ԱՅՈՒ ՈՉ X

Եթե ձևաչափում կատարվել են փոփոխություններ, ապա նշել դրանց բնույթն ու հիմնավորումները՝

.....

ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԱԳՐՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿ

Ծախսային տարրերը	Ֆիքսված ծախսեր (<< դրամ)		Փոփոխուն ծախսեր (<< դրամ)		Ընդամենը (<< դրամ)	Ծախսերի վերագրման համար կիրառված մեթոդաբանությունը
	Ուղղակի ծախսեր	Անուղղակի ծախսեր	Ուղղակի ծախսեր	Անուղղակի ծախսեր		
1	2	3	4	5	6	7
Ընթացիկ			75 000 000		75 000 000	Ծախսերի ուղղակի վերագրում
ԸՆԴԱՄԵՆԸ					75 000 000	X

**ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԿԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

1. ՈԼՈՐՏԸ

Հայաստանում ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական խնդիրներն են՝ ներդրումային միջավայրի բարելավումը, օրենսդրական դաշտի կատարելագործումը և ՀՀ տնտեսության մեջ ներդրումների, այդ թվում՝ օտարերկրյա ուղղակի ներդրումների (այսուհետ՝ ՕՈՒՆ) խթանումը:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը ներդրումային ոլորտում առաջնորդվելու է «բաց դռների» քաղաքականության, ներդրումային գործունեության հետ կապված հարաբերությունների ազատականացման, օտարերկրյա ներդրողների նկատմամբ ազգային և առավել բարենպաստության ռեժիմների ամրագրման, ներդրումների պատշաճ պաշտպանության և միջազգային առաջադեմ պրակտիկայում ընդունված այլ սկզբունքներով:

Որպես խնդիրների լուծման հիմնական գրավական՝ կարևորվում է ՀՀ մասնավոր հատվածում ներդրումների խրախուսումը: Հստակ գիտակցելով, որ միայն տեղական մասնավոր հատվածի ջանքերը բավարար չեն՝ Կառավարությունը ակտիվորեն փորձելու է օտարերկրյա ներդրումներ ներգրավել՝ տնտեսական և սոցիալական ոլորտների գերակա նպատակների իրագործման համար՝ միաժամանակ ընդունելով, որ օտարերկրյա ներդրումները կարող են նպաստել տեղական տնտեսության զարգացմանը գիտելիքների և կապիտալի փոխանցման, բարձր հմտություններ պահանջող աշխատատեղերի ստեղծման, միջազգային ներդրողների դիստրիբյուտորական ցանցերի հասանելիության ապահովման միջոցով:

Ուստի համարելով ներդրումային միջավայրի բարելավումը երկրի տնտեսական առաջընթացի հիմնական գերակայություններից մեկը՝ Կառավարությունը հետևողականորեն իրականացնելու է հատուկ քաղաքականության միջոցառումներ, որոնք աջակցելու են բարենպաստ ներդրումային միջավայրի ձևավորմանը՝ օտարերկրյա և տեղական ներդրումների համար լրացուցիչ խթաններ ստեղծելու միջոցով:

Այս համատեքստում խիստ կարևորվում է այն հանգամանքը, որ վերոնշյալ միջոցառումները համահունչ լինեն այլ ոլորտներում իրականացվող քաղաքականությունների հետ, քանզի ներդրումային քաղաքականությունը խիստ զգայուն է և իր վրա կրում է մի շարք ազդեցություններ՝ առևտրային քաղաքականություն, մրցակցություն, հարկային քաղաքականություն, «կանաչ զարգացում»:

Այսպիսով, ներդրումային քաղաքականության բարեփոխումների ուղղությամբ կտարվի նպատակաուղղված և հետևողական աշխատանք՝ ներդրումների իրականացմանը նպաստող գործուն, արդյունավետ և թափանցիկ համակարգի ապահովման, ներդրումների իրավական կարգավորման շրջանակի բարելավման և արդիականացման, ներդրումային

գործունեությանն առնչվող միջազգային լավագույն չափանիշների և փորձի կիրառման ուղղությամբ:

2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆԹԻՐԱԽՆԵՐԸ

Հայաստանի Հանրապետության ներդրումային քաղաքականության հիմնական նպատակն է ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորումը, կարգավորող միջավայրի թափանցիկության բարձրացումը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտումը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացումը, շուկայական ենթակառուցվածքի զարգացումը, որակյալ և բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծումը, մարդկային կապիտալի զարգացումը և այդ բոլորի հիման վրա՝ տնտեսական կայուն աճի և բնակչության բարեկեցության ապահովումը, ինչը համահունչ է Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի գերակայություններին, ՀՀ կառավարության՝ 8 փետրվարի 2019 թվականի N 65-Ա ծրագրի 5.6. կետին, ՀՀ կառավարության՝ 6 սեպտեմբերի 2018 թվականի N 1030 - Լ 2018-2022թթ. գործունեության միջոցառումների ծրագրի 230 կետին և ՀՀ կառավարության 2015 թ. հոկտեմբերի 8-ի նիստի N 45 արձանագրային որոշմամբ հավանության արժանացած ՀՀ ներդրումային քաղաքականության հայեցակարգին:

Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ծրագրի ավարտին ավելացնել օտարերկրյա ուղղակի ներդրումներ/ՀՆԱ հարաբերակցությունը՝ 0.4 տոկոսային կետով (2018թթ. ՕՈՒՆ/ՀՆԱ միջին ցուցանիշը կազմել է 2.1%, 2019 թվականի համար ցուցանիշը կանխատեսվում է 2.3%, իսկ 2020 թվականին՝ ծրագրի ավարտին, նախատեսվում է այն հասցնել 2.5%-ի):

3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խորհրդատավական ծառայությունների տրամադրման ծրագիրը նախատեսվում է իրականացնել գործողություններ, որոնք, նպատակ ունենալով նպաստել Ներդրումային քաղաքականության բարելավմանն ու արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորմանը, իրենց մեջ ներառում են մի շարք ուղղություններ, մասնավորապես՝ ուղղված իրականացվելու են՝ ներդրումներին առնչվող իրավական ակտերի մշակում, Կառավարության մոնիտորինգի և գնահատման կարողությունների զարգացում, օտարերկրյա ուղղակի ներդրումների բարեփոխումների արդյունքների հաղորդակցում և տարածում, օտարերկրյա ուղղակի ներդրումների ուսումնասիրություն թիրախավորված ոլորտներում, համապատասխան գերատեսչությունների հետ պիլոտային ոլորտներում/ ենթաոլորտներում ներդրումային միջավայրի խոչընդոտների բացահայտում և դրանց լուծման համար առաջարկությունների մշակում, ներդրումային խթանների կատարելագործում, տնտեսական դիվանագիտության դասընթացների մշակում և իրականացում, Doing Business բարեփոխումների հուշագրի և զեկույցում ընդգրկված առաջնահերթ ոլորտների գործողությունների ծրագրի մշակում և իրականացման

աջակցություն, խորհրդատվություն Doing Business աշխատանքային խմբին: Նախատեսվում է նաև ընտրել արտահանման պոտենցիալ ունեցող մի քանի արտադրանքներ և իրականացվել վերջիններիս վերլուծություն՝ բացահայտելու այդ արտադրանքների արտադրության (ներդրումներ ներգրավել այդ ուղղությամբ) և արտահանման հնարավորությունները:

4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ոլորտային քաղաքականության թիրախների ապահովման նպատակով նախատեսվում է իրականացնել խորհրդատվական ծառայությունների տրամադրման ծրագիրը, որի ընդհանուր բյուջեն կազմում է 1,725,000 (մեկ միլիոն յոթ հարյուր քսանհինգ հազար) ԱՄՆ դոլար: ՄՖԿ կողմից ֆինանսավորում է ծրագրի ընդհանուր բյուջեի մինչև 90%-ը՝ 1,350,000 (մեկ միլիոն երեք հարյուր հիսուն հազար) ԱՄՆ դոլարը, իսկ ՀՀ կառավարությունն իրականացնում է 150,000 (հարյուր հիսուն հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով գումարային աջակցություն և 225,000 (երկու հարյուր քսանհինգ հազար) ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի չափով բնաիրային աջակցություն:

Cooperation Agreement

**Համագործակցության
համաձայնագիր**

between

**THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF
ARMENIA**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**

represented by
**THE MINISTRY OF ECONOMIC
DEVELOPMENT AND INVESTMENTS OF THE
REPUBLIC OF ARMENIA**

ի դեմս
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**

and

և

INTERNATIONAL FINANCE CORPORATION

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՅԻ

միջև

Dated: February 14, 2019

Ամսաթիվ՝ 14 փետրվարի 2019թ.

COOPERATION AGREEMENT

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ON THIS 14th DAY OF FEBRUARY 2019:

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2019թ.

(1) **THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA**, represented by **THE MINISTRY OF ECONOMIC DEVELOPMENT AND INVESTMENTS OF THE REPUBLIC OF ARMENIA** (the “Ministry”);

(1) **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ** (այսուհետ՝ կառավարություն), ի դեմս **ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ**, (այսուհետ՝ Նախարարություն), և

DOES HEREBY ENTER INTO THIS AGREEMENT WITH:

կնքում են սույն Համաձայնագիրը

(2) **INTERNATIONAL FINANCE CORPORATION**, an international organization established by Articles of Agreement among its member countries, including the Republic of Armenia (“IFC”).

(2) **ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՅԻՍԻ**՝ իր անդամ երկրների, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության, միջև կնքված Համաձայնագրի Հոդվածների համաձայն ստեղծված միջազգային կազմակերպության (այսուհետ՝ ՄՖԿ) հետ:

In this Agreement the term “Parties” is sometimes used to refer to IFC and the Ministry collectively, and the term “Party” is sometimes used to refer to either of them.

Սույն Համաձայնագրում, «Կողմեր» տերմինը վերաբերում է Նախարարությանը և ՄՖԿ-ին միասին, և «Կողմ» տերմինը՝ յուրաքանչյուրին առանձին-առանձին:

PART I

ՄԱՍ 1

PROJECT SPECIFIC TERMS

ԾՐԱԳՐԻ ՀՍՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

1. **The Parties**

1. **Կողմերը**

(a) IFC, a member of the World Bank Group, is an international organization whose mission is to promote sustainable private sector investment in developing countries, helping to reduce poverty and improve people’s lives. IFC’s Armenia Investment Policy and Promotion/Agribusiness Project (the “Program”) provides advisory services to help strengthen the development of the private sector in Armenia and is managed by Finance, Competitiveness and Innovation Global Practice of the Europe and Central Asia Department.

(a) Համաշխարհային բանկի խմբի անդամ ՄՖԿ-ն միջազգային կազմակերպություն է, որի առաքելությունն է զարգացող երկրներում մասնավոր հատվածում կայուն ներդրումներ խթանելը, աղքատությունը հաղթահարելուն աջակցելը և մարդկանց կյանքը բարելավելը: ՄՖԿ-ի Հայաստանում ներդրումային քաղաքականություն և խթանում/ազդեցությունների ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մատուցում է խորհրդատվական ծառայություններ՝ Հայաստանում մասնավոր հատվածի զարգացմանը խթանելու նպատակով և կառավարվում է Եվրոպայի և Միջին Ասիայի տարածաշրջանի Ֆինանսներ, մրցունակություն և նորարարություն դեպարտամենտի կողմից:

(b) The Ministry is a state body of executive power whose purpose is to create conditions for stimulation of competition and balanced and sustainable development of the economy, as well as guarantee state economic security by economic policy development, realization, coordination and evaluation of the results.

(b) Նախարարությունը՝ գործադիր իշխանության հանրապետական մարմին է, որի նպատակն է տնտեսական քաղաքականության մշակման, իրականացման, համակարգման և արդյունքների գնահատման միջոցով ստեղծել պայմաններ մրցակցության խթանման և տնտեսության հավասարակշիռ և կայուն զարգացման, ինչպես նաև պետության տնտեսական անվտանգության ապահովման համար:

2. **The Project and Project Implementation.**

2. **Ծրագիրը և ծրագրի իրականացումը.**

(a) The Parties hereby agree to cooperate in the development and implementation of the project as described below (the “Project”) on the terms and conditions set forth in this Agreement.

(a) Սույնով, Կողմերը համաձայն են համագործակցել ստորև նկարագրված ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մշակման և իրականացման շրջանակներում՝ սույն Համաձայնագրում նշված պայմաններով ու ժամկետներում:

(b) Project Implementation.

(b) Ծրագրի իրականացումը.

(i) Parties’ Roles and Responsibilities

(i) Կողմերի դերերն ու պարտականությունները

(A) IFC’s Role and Responsibilities. In the framework of the Project, IFC will:

(A) ՄՖԿ-ի դերն ու պարտականությունները.

(I) support the Ministry in conducting a foreign direct investment (“FDI”) sector scan in high-tech sector;

(I) Ծրագրի շրջանակներում, ՄՖԿ-ն կաջակցի Նախարարությանը կատարել Օտարերկրյա ուղղակի ներդրումների (ՕՈԻՆ) ոլորտային ուսումնասիրություն բարձր տեխնոլոգիաների ոլորտում;

(II) support the Ministry in conducting an analytical review of export potential of the selected products; and

(II) ՄՖԿ-ն կաջակցի Նախարարությանը կատարել ընտրված ապրանքների համար համապատասխան արտահանման շուկաներ բացահայտելու և առաջարկելու վերլուծական ուսումնասիրություն; և

(III) provide *ad hoc* assistance, by way of assistance to the Ministry and/or the government in its or their *ad hoc* requests related to Project activities.

(III) կտրամադրի աջակցություն՝ ծրագրի աշխատանքների իրականացման հետ կապված նախարարությանը և/կամ կառավարությանը տրամադրելով օժանդակություն հատուկ հարցումներում:

(B) Ministry's Role and Responsibilities. In the framework of the Project, the Ministry will:

(I) support IFC in its work with respective state agencies of the Republic of Armenia (the "Agencies") by assigning a group of experts from the staff of the Ministry to work with IFC on implementation of reforms in the Project areas; and

(II) provide to IFC and ensure the provision by the Agencies, to the best of its ability, all the necessary documents and information related to the Project areas of cooperation.

(ii) Timeline

The implementation of the Project will commence on the date first written above and last until December 31, 2019.

(iii) Deliverables

In the framework of the Project, it is expected that a report on FDI high-tech sector scan will be delivered

3. Assistance from Consultant(s).

(a) The Parties have agreed that certain tasks relating to implementation of the Project are best completed by an external consultant (the "Consultant") to be selected by IFC.

(b) Promptly after the date of this Agreement, IFC will make arrangements to select the

(B)Նախարարության դերն ու պարտականությունները. Ծրագրի շրջանակներում, Նախարարությունը

(I) կաջակցի ՄՖԿ-ին համապատասխան գերատեսչությունների հետ նրա աշխատանքներում՝ Նախարարության կազմից փորձագետների խումբ ձևավորելու միջոցով, որը կաշխատի ՄՖԿ-ի հետ ծրագրային ոլորտներում բարեփոխումների իրականացման ուղղությամբ,

(II) կտրամադրի ՄՖԿ-ին համագործակցության Ծրագրի ոլորտներին առնչվող անհրաժեշտ բոլոր փաստաթղթերն ու տեղեկությունները, ինչպես նաև առավելագույն ջանքեր կգործադրի Գործակալությունների կողմից փաստաթղթերի ու տեղեկությունների տրամադրումն ապահովելու համար:

(ii) Ժամանակացույց

Ծրագրի իրականացումը կսկսվի վերը հիշատակված ամսաթվի առաջին օրը և կշարունակվի մինչև 2019 թվականի դեկտեմբերի 31-ը:

(iii) Արդյունքներ

Ծրագրի շրջանակներում ակնկալվում են հետևյալ արդյունքները՝ բարձր տեխնոլոգիաների ոլորտում ՕՈՒՆ ուսումնասիրություն:

3. Աջակցություն խորհրդատու(ներ)ից.

(a) Կողմերն ընդունում են, որ Ծրագրի իրականացման հետ կապված որոշ աշխատանքներ կարող են լավագույնս կատարվել արտաքին խորհրդատուի (այսուհետ՝ Խորհրդատու) կողմից, որը կընտրվի ՄՖԿ-ի կողմից:

(b) Սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո, ՄՖԿ-ն ձեռք կբերի

Consultant in accordance with IFC's internal procedures and World Bank Group procurement guidelines. Following selection, IFC will enter into an agreement with the Consultant (the "Consultant Agreement").

(c) The Consultant will report directly to IFC on all matters. Upon IFC's request, the Ministry will promptly provide the Consultant with all the documents, information and assistance that the Consultant may need to fulfill its tasks in a prompt and effective manner.

4. Budget and Contributions to the Project.

(a) The budget for the Project ("Budget") is estimated to be minimum eighty-eight thousand United States dollars (\$88,000).

(b) IFC Contributions: IFC will contribute to the project the amount of up to eighty eight thousand United States dollars (\$88,000), in the form of in-kind and cash contributions, which includes costs of staff time, Consultant's time, travel, accommodation and other expenses in connection with implementation of the Project and necessary for fulfillment of IFC's roles and responsibilities under Section 2(b), Part I of this Agreement.

(c) The Parties undertake to consult with each other on a periodic basis with respect to the status of Project implementation, proposed changes in Budget projections and actual Budget spending. If the Parties determine that the actual costs of the Project are likely to exceed the Budget, the Parties shall together discuss how such excess costs shall be met.

Խորհրդատուի ընտրության պայմանավորվածություններ՝ ՄՖԿ-ի ներքին ընթացակարգերի և Համաշխարհային բանկի խմբի գնումների կանոնակարգերի համաձայն: Ընտրությունից հետո ՄՖԿ-ն Խորհրդատուի հետ կկնքի պայմանագիր (այսուհետ՝ Խորհրդատուի պայմանագիր):

(c) Խորհրդատուն բոլոր հարցերով հաշվետու կլինի անմիջապես ՄՖԿ-ին: ՄՖԿ-ի պահանջով Նախարարությունը Խորհրդատուին անհապաղ կտրամադրի իր առաքելությունն արագ և արդյունավետ իրականացնելու համար պահանջվող բոլոր փաստաթղթերը, տեղեկատվությունը և աջակցությունը:

4. Բյուջեն և ներդրումները Ծրագրում.

(a) Ծրագրի բյուջեն (այսուհետ՝ Բյուջե) կազմում է առնվազն ութսունութ հազար ԱՄՆ դոլար (\$88,000):

(b) ՄՖԿ-ի ներդրումներ. ՄՖԿ-ն կներդնի Ծրագրին ութսունութ հազար ԱՄՆ դոլարի չափով (\$88,000), որը ներառում է բնափրային ձևով և դրամական ներդրումները՝ ներառյալ աշխատակազմի ժամանակի ծախսեր, Խորհրդատուի ժամանակի, գործուղման, ինչպես նաև Ծրագրի իրականացման հետ կապված և սույն Համաձայնագրի Մաս I-ի 2-րդ բաժնի (b) ենթակետում սահմանված ՄՖԿ-ի դերի ու պարտականությունների կատարման համար անհրաժեշտ այլ ծախսեր:

(c) Կողմերը համաձայնվում են կանոնավոր հիմունքներով խորհրդակցել միմյանց հետ Ծրագրի իրականացման կարգավիճակի, Բյուջեի կանխատեսումների և փաստացի Բյուջեի ծախսերի առաջարկվող փոփոխությունների հետ կապված հարցերի շուրջ: Եթե Կողմերը գիտակցում են, որ Ծրագրի փաստացի ծախսերը հավանական է, որ կգերազանցեն Բյուջեն, ապա Կողմերը պետք է համատեղ քննարկեն, թե ինչպես են ծածկվելու այդ հավելյալ ծախսերը:

5. **Intellectual Property Rights.**

(a) Definitions.

- (i) “Materials” means information, data, databases, charts, graphics, artwork, photographs, reports, audio materials, video materials, audio-visual materials, software, applications, inventions, processes, and other materials in whatever form.
- (ii) “New Materials” means all Materials created in connection with the Project and all related Intellectual Property Rights, including, for clarity, any derivative works arising from the New Materials.
- (iii) “Pre-existing Materials” means any Materials and all related Intellectual Property Rights owned by one of the Parties prior to the date of this Agreement.
- (iv) “Third Party Materials” means any Materials and all related Intellectual Property Rights owned by a party other than the Parties.
- (v) “Intellectual Property Rights” means rights in intellectual property, such as copyright, patent, trademark, trade secret and other proprietary rights.

5. **Մտավոր սեփականության իրավունքներ.**

(a) Մահմանումներ

- (i) «Նյութեր» նշանակում է տեղեկություններ, տվյալներ, տվյալների բազաներ, աղյուսակներ, գծագրեր, ցուցադրական նյութեր, լուսանկարներ, հաշվետվություններ, աուդիո նյութեր, տեսաձայնային նյութեր, ծրագրային ապահովումներ, կիրառություններ, հայտնագործություններ, գործընթացներ և ցանկացած ձևի այլ նյութեր:
- (ii) «Նոր նյութեր» նշանակում է ցանկացած նյութ, որը ստեղծվել է Ծրագրի շրջանակում և դրա հետ կապված բոլոր հարակից մտավոր սեփականության իրավունքները ներառյալ, պարզության համար, Նոր նյութերից ածանցվող այլ նյութեր:
- (iii) «Արդեն գոյություն ունեցող նյութեր» նշանակում է ցանկացած նյութ և դրա հետ կապված բոլոր հարակից մտավոր սեփականության իրավունքները, որոնք պատկանում են Կողմերից մեկին՝ նախքան սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթիվը:
- (iv) «Երրորդ կողմերի նյութեր» նշանակում է ցանկացած նյութ և դրա հետ կապված բոլոր հարակից մտավոր սեփականության իրավունքները, որոնք պատկանում են սույն Համաձայնագրի կողմ չհանդիսացող այլ անձանց:
- (v) «Մտավոր սեփականության իրավունքներ» նշանակում է մտավոր սեփականության նկատմամբ իրավունքներ, ինչպիսիք են հեղինակային իրավունքը, արտոնագիրը, ապրանքային նշանները, առևտրային գաղտնիքը և

մտավոր սեփականությունից բխող այլ իրավունքները:

(b) Ownership and License of New Materials. Subject to the terms and conditions of this Agreement:

- (i) All New Materials created in connection with the Project, along with all related Intellectual Property Rights, shall be solely owned by IFC.
- (ii) IFC hereby grants to Ministry for the term of this Agreement a non-exclusive, fully paid up license within the territory of the Republic of Armenia to use, make, reproduce and distribute the New Materials, without any right to sub-license, as may be reasonably necessary for the Ministry to fulfill its obligations in respect of the Project.

(c) Pre-Existing Materials. For clarity, all Materials owned by the Ministry or IFC prior to the date of this Agreement and used in connection with the Project, and all related Intellectual Property Rights, shall remain the sole property of the Ministry, or IFC, as the case may be. Each of the Parties grants to the other a non-exclusive, fully paid-up license, without any right to sub-license, to use such Pre-existing Materials and related Intellectual Property Rights, solely as needed for such other Party to perform its obligations hereunder or to exercise the rights granted to such Party herein.

(b) Նոր Նյութերի սեփականությունը և լիցենզիան. Սույն Համաձայնագրի պայմանների և ժամկետների համաձայն՝

- (i) Ծրագրի շրջանակում ստեղծված բոլոր Նոր Նյութերը և դրանց հետ կապված բոլոր հարակից մտավոր սեփականության իրավունքները հանդիսանում են միայն ՄՖԿ-ի սեփականությունը.
- (ii) Սույնով, ՄՖԿ-ն սույն Համաձայնագրի գործողության ժամկետում Նախարարությանը տրամադրում է Ծրագրի շրջանակներում Նախարարության կողմից ստանձնած պարտավորությունների կատարման անհրաժեշտությամբ պայմանավորված Նոր Նյութերը Հայաստանի Հանրապետության տարածքում օգտագործելու, կազմելու, վերարտադրելու և տարածելու ոչ բացառիկ, ամբողջությամբ վճարված լիցենզիա առանց ենթալիցենզիա տրամադրելու իրավունքի:

(c) Արդեն գոյություն ունեցող նյութեր. Պարզության համար, սույն Համաձայնագրի գործողության ամսաթվից առաջ Նախարարությանը կամ ՄՖԿ-ին պատկանող և Ծրագրի առնչությամբ օգտագործվող ցանկացած նյութ և դրա հետ կապված բոլոր հարակից մտավոր սեփականության իրավունքները հանդիսանում են Նախարարության կամ ՄՖԿ-ի սեփականությունը, որը որ կիրառելի է: Կողմերից յուրաքանչյուրը մյուս Կողմին տրամադրում է Արդեն գոյություն ունեցող նյութերը և դրանց հետ կապված բոլոր հարակից մտավոր սեփականության իրավունքներն օգտագործելու ոչ բացառիկ, ամբողջությամբ վճարված լիցենզիա՝ առանց ենթալիցենզիա տրամադրելու իրավունքի, որն անհրաժեշտ է սույն Համաձայնագրով սվյալ Կողմի ստանձնած պարտավորությունները կատարելու կամ իրավունքներն իրականացնելու համար:

(d) Confirmations. Each of the Parties confirms that: (i) it has and will have full and sufficient rights in any Pre-Existing Materials owned by such Party, to grant the licenses and perform its obligations under this Agreement, (ii) any New Materials and Pre-existing Materials owned by a Party do not and will not include any obscene, defamatory or similar content with respect to any third party, or (as appropriate) contain any other computer programming code or routines that may damage, interfere with, intercept or expropriate any system, data, or personal information, and (iii) to each Party's respective knowledge, the New Materials and Pre-existing Materials do not and will not infringe the intellectual property rights of any third party.

(e) Third Party Claims. Should any third party make any allegation that any New Materials violate any Third Party Materials, whichever of the Parties first learns of such allegation shall promptly notify the other. In such event, IFC may, at its sole option, require the Ministry to modify such New Materials as it instructs or terminate the Ministry's rights in such New Materials and require the Ministry to cease all use thereof.

(f) Liquidation. Should the Ministry become the subject of a liquidation or similar proceeding, IFC shall be permitted to retain its licenses in Intellectual Property Rights and to take appropriate action to retain its licenses, to the extent permitted under applicable law.

(g) Work for Other Clients. Notwithstanding any other term of this Agreement, IFC

(d) Հաստատումներ. Կողմերից յուրաքանչյուրը հաստատում է, որ (i) ունի և կունենա իրեն պատկանող Արդեն գոյություն ունեցող նյութերի նկատմամբ լրիվ և բավարար իրավունքներ, որոնք անհրաժեշտ են սույն Համաձայնագրով նախատեսված լիցենզիաները տրամադրելու և իր պարտավորությունները կատարելու համար, (ii) Կողմին պատկանող ցանկացած Նոր Նյութ և Արդեն գոյություն ունեցող նյութ չի ներառում և չի ներառի երրորդ կողմին վարկաբեկող, գրպարտող կամ համանման բովանդակություն, կամ (կիրառելի լինելու դեպքում) ցանկացած այնպիսի համակարգչային ծրագրավորման կոդ կամ ենթածրագիր, որը կարող է վնասել, միջամտել, հափշտակել կամ բռնագրավել որևէ համակարգ, տվյալ կամ անձնական տեղեկություն, և (iii) այնքանով, որքանով յուրաքանչյուր Կողմ տեղյակ է Նոր Նյութը և Արդեն գոյություն ունեցող նյութը չի խախտում և չի խախտի որևէ երրորդ անձի մտավոր սեփականության իրավունքները:

(e) Երրորդ կողմի պահանջներ. Եթե որևէ երրորդ կողմ մեղադրանք է ներկայացնում առ այն, որ որևէ Նոր Նյութ խախտում է որևէ Երրորդ Կողմի Նյութը, ապա առաջինն իրազեկված Կողմը պարտավոր է այդ մասին անհապաղ տեղեկացնել մյուս Կողմին: Այդ դեպքում, ՄՖԿ-ն՝ իր հայեցողությամբ, կարող է պահանջել Նախարարությունից փոփոխել խնդրո առարկա Նոր Նյութը՝ ՄՖԿ-ի ցուցումներին համապատասխան, կամ դադարեցնել Նոր Նյութի նկատմամբ Նախարարության իրավունքները և Նախարարությունից պահանջել դադարեցնել ցանկացած ձևով դրա հետագա օգտագործումը:

(f) Լուծարում. Եթե Նախարարությունը դառնում է լուծարման գործընթացի կամ նման այլ վարույթի սուբյեկտ, ապա ՄՖԿ-ին պետք է թույլատրվի պահպանել մտավոր սեփականության նկատմամբ իր լիցենզիաները և այդ առնչությամբ ձեռնարկել համապատասխան քայլեր՝ կիրառելի օրենսդրությամբ նախատեսված կարգով:

(g) Այլ հաճախորդների հետ աշխատելը. Անկախ սույն Համաձայնագրով նախատեսված որևէ այլ դրույթի, ՄՖԿ-ն ունի իր կողմից

shall have the world-wide, irrevocable, non-exclusive right and license to use and otherwise exploit the advice provided by IFC to the Ministry for the benefit of IFC's other clients and in other projects in which IFC cooperates, as well as to allow such other of IFC's clients to use such advice in connection with their respective business activities.

Նախարարությանը տրամադրած խորհրդատվությունն ի նպաստ ՄՖԿ-ի այլ հաճախորդների և ՄՖԿ-ի համագործակցությամբ իրականացվող այլ ծրագրերում օգտագործելու կամ այլ կերպ տնօրինելու համաշխարհային, անհետկանչելի, ոչ բացառիկ իրավունք և լիցենզիա, ինչպես նաև թույլատրելու, որ ՄՖԿ-ի այլ հաճախորդներն օգտագործեն այդ խորհրդատվությունն իրենց համապատասխան բիզնես գործունեության շրջանակներում:

6. **Environmental and Social Development Principles.**

The Ministry acknowledges that IFC has provided the Ministry with a copy of the IFC Sustainability Framework referred to in Annex A. The Ministry agrees that it shall be guided by that Framework in carrying out the Project.

6. **Բնապահպանական և սոցիալական զարգացման սկզբունքները.**

Նախարարությունն ընդունում է, որ ՄՖԿ-ն իրենց տրամադրել է ՄՖԿ-ի Կայունության ապահովման փաստաթղթի կրկնօրինակը, որը ներկայացվում է Հավելված Ա-ում: Նախարարությունն ընդունում է, որ Ծրագիրն իրականացնելիս առաջնորդվելու են այդ սկզբունքներով:

7. **Project Data and Results Reporting.**

(a) The Ministry acknowledges that it is fundamental to IFC's operations as an international development institution that IFC be able to measure the development results from the projects that it supports. The Ministry and IFC agree that the Project's performance will be monitored based on the components and using the performance indicators ("Indicators") specified in Annex B.

7. **Ծրագրի տեղեկությունները և արդյունքների հաշվետվությունը.**

(a) Նախարարությունն ընդունում է, որ ՄՖԿ-ի, որպես զարգացման միջազգային կառույցի համար, կարևոր է կարողանալ չափել իր աջակցությամբ իրականացվող ծրագրերի զարգացման արդյունքները: Նախարարությունը և ՄՖԿ-ն համաձայնվում են, որ Ծրագրի արդյունքները չափվեն հիմք ընդունելով Հավելված Բ-ում սահմանված բաղադրիչները և օգտագործելով կատարողականի ցուցանիշները (այսուհետ՝ ցուցանիշներ):

(b) At the commencement of the Project, the Ministry will provide IFC with such Project-related information as shall be reasonably necessary to establish the baseline(s) against which the Indicators can subsequently be measured. The Ministry further agrees to provide IFC with the data reasonably necessary to measure the ongoing development results of the Project using the Indicators. IFC will hold and use the data and other information delivered by the Ministry in accordance with IFC's Access to Information Policy, which is further described in

(b) Գնահատման արդյունավետությունն ապահովելու նպատակով, Նախարարությունը համաձայն է Ծրագրի սկզբին ՄՖԿ-ին տրամադրել Նախարարության ունեցած Ծրագրին առնչվող այն տեղեկատվությունը, որն անհրաժեշտ է էլակետային ցուցանիշները որոշելու համար՝ հետագայում դրանց համեմատ Ծրագրի գործունեությունը գնահատելու նպատակով: Նախարարությունը համաձայն է ՄՖԿ-ին տրամադրել նաև տրամաբանորեն անհրաժեշտ տեղեկատվություն՝ Ծրագրի ընթացիկ զարգացումները ցուցանիշների

Section 6 of Part II of this Agreement.

միջոցով չափելու համար: ՄՖԿ-ն կպահի և կկիրառի Նախարարության կողմից տրամադրված տեղեկատվությունը ՄՖԿ-ի Տեղեկատվության հասանելիության քաղաքականության համաձայն, որը մանրամասնորեն նկարագրված է սույն Համաձայնագրի Մաս II-ի 6-րդ բաժնում:

(c) During the term of this Agreement and in any event for no less than two (2) years following December 31, 2019, the Ministry will provide any additional Project-related performance data as shall be reasonably requested for the purpose of results measurement by either IFC staff or consultants engaged by IFC.

(c) Համաձայնագրի գործողության 2019թ. դեկտեմբերի 31-ին հաջորդող առնվազն երկու տարիների ընթացքում, Նախարարությունը համաձայն է տրամադրել Ծրագրի իրագործման հետ կապված ցանկացած լրացուցիչ տեղեկատվություն, որն անհրաժեշտ է ՄՖԿ-ին կամ նրա կողմից վարձված խորհրդատուներին՝ Ծրագրի գնահատման համար:

(d) Provision by the Ministry of data for the purposes of the Indicators shall not preclude the Ministry from any other data reporting.

(d) Նախարարության կողմից Ծրագրի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը չի ազատում Նախարարությանն այլ տեղեկատվության տրամադրումից:

(e) More information on IFC's results measurement framework is available at www.ifc.org/wps/wcm/connect/topics_ext_content/ifc_external_corporate_site/development+impact/results+measurement+framework.

(e) ՄՖԿ-ի արդյունքների չափման մեթոդաբանության վերաբերյալ հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ www.ifc.org/wps/wcm/connect/topics_ext_content/ifc_external_corporate_site/development+impact/results+measurement+framework կայքից:

8. Communications.

8. Կապի միջոցներ.

(a) Notices.

(a) Տեղեկացումները.

Any notice, request or other formal communication to be given or made under this Agreement shall be in writing and shall be deemed to have been duly given when delivered by hand, airmail, established courier service, or facsimile to the recipient at the respective addresses listed below, or at such other address as designated by a subsequent notice in writing.

Սույն Համաձայնագրի շրջանակներում արված ցանկացած տեղեկացում, հարցում կամ այլ պաշտոնական հաղորդակցություն պետք է լինի գրավոր և համարվում է պատշաճ կերպով հանձնված, եթե առաքվել է առձեռն, օդային փոստով, սուրհանդակային ծառայության միջոցով կամ ֆաքսով այն Կողմի ստորև նշված հասցեով ում պետք է հանձնվի տեղեկացումը, հարցումը կամ այլ հաղորդակցությունը կամ վերջինիս կողմից տեղեկացում, հարցում կամ այլ հաղորդակցություն հանձնող Կողմին համապատասխան ծանուցամբ տեղեկացված այլ հասցեով:

For the Ministry:

Address for communications:

The Ministry of Economic Development and Investments of the Republic of Armenia

5 M. Mkrtchyan St, Yerevan 0010,
Republic of Armenia

Attention: Deputy Minister
Facsimile: +374 10 59 71 13

Նախարարության համար.

Հաղորդակցման համար հասցե՝
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների
նախարարություն
Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 0010, Մ. Մկրտչյան 5

Ում անունով՝ փոխնախարար
Ֆաքս՝ +374 10 59 71 13

For IFC:

Address for communications:

International Finance Corporation

5B, Nino Ramishvili Street,
Tbilisi 0179, Tbilisi, Georgia

Attention: Senior Manager
Europe and Central Asia
Facsimile: +995 322 23 43 60

ՄՖԿ-ի համար.

Հաղորդակցման համար հասցե՝
Միջազգային ֆինանսական կորպորացիա
Նինո Ռամիշվիլի 5Բ
ք. Թբիլիսի 0179, Վրաստան

Ում անունով՝ Տարածաշրջանային ղեկավար
Եվրոպա և Միջին Ասիա
Ֆաքս՝ +995 322 23 43 60

(b) **Emails.**

The Parties acknowledge that for the duration of the Project they may communicate with each other by email. However, because such communications cannot be guaranteed to be secure or virus or error free, the Parties agree that any required notices or other formal communications required under this Agreement must be sent in accordance with subsection (a) above in order to be effective.

(b) **Էլեկտրոնային նամակներ.**

Կողմերը ընդունում են, որ Ծրագրի գործողության ընթացքում կարող են միմյանց հետ կապ հաստատել էլեկտրոնային փոստի միջոցով: Քանի որ հաղորդակցման այս միջոցը չի կարող երաշխավորել ապահովություն կամ սխալի կամ վիրուսների բացակայություն, Կողմերը համաձայնվում են, որ սույն Համաձայնագրով անհրաժեշտ պարտադիր տեղեկատվության փոխանցումը կամ պաշտոնական գրազրույթունն արդյունավետ լինելու համար պետք է ուղարկվի համաձայն սույն կետի (ա) ենթակետի:

PART II

STANDARD TERMS

ՄԱՍ II

ՄՏԱՆԴԱՐՏ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. **Authorizations.**

The Ministry shall cause to obtain and maintain in effect at all times all governmental, administrative, corporate and other authorizations necessary for the full implementation of this Agreement and the Consultant Agreement.

2. **Reports and Documents.**

All reports and documents prepared by or with IFC's assistance may be distributed by the Ministry as needed among its employees and officers, but may only be distributed to third parties after the Ministry has asked for and received IFC's written consent, and then with the insertion of such disclaimers as IFC shall request.

3. **Representation of IFC's Views and Use of IFC's Name, Marks and Logo.**

Each of the Ministry agrees that it shall not:

(a) represent, or permit the representation of, IFC's views without IFC's prior written consent; or

(b) use, or permit the use of IFC's name, marks or logos in any advertisements, promotional literature or information without IFC's prior written consent, and that if IFC does so consent, that they shall use the name, marks and logos strictly in accordance with the permission provided and with the insertion of such disclaimers as IFC shall request.

1. **Թույլտվություններ.**

Նախարարությունը պարտավորվում է ստանալ սույն Համաձայնագրի և Խորհրդատուի համաձայնագրի լիարժեք իրականացման համար անհրաժեշտ բոլոր պետական, վարչական, կորպորատիվ և այլ թույլտվությունները և մշտապես ապահովել դրանց վավերականությունը:

2. **Զեկույցներ և փաստաթղթեր.**

ՄՖԿ-ի կողմից կամ նրա աջակցությամբ պատրաստված բոլոր հաշվետվությունները և փաստաթղթերը Նախարարությունը, ըստ անհրաժեշտության, կարող են տրամադրել ծրագրի հետ առնչություն ունեցող իր աշխատողներին և պաշտոնյաներին, սակայն երրորդ կողմերին կարող է տրամադրել միայն ՄՖԿ-ի նախնական գրավոր համաձայնությամբ և ՄՖԿ-ի կողմից պահանջվող ձևի՝ պատասխանատվության սահմանափակման վերաբերյալ դրույթների ներառմամբ:

3. **ՄՖԿ-ի տեսակետների ներկայացնելը և անվան, նշանների և լոգոների օգտագործումը.**

Նախարարությունը պարտավորվում է՝

(a) չներկայացնել ՄՖԿ-ի տեսակետները կամ չթույլատրել դրանց ներկայացումն առանց ՄՖԿ-ի նախնական գրավոր համաձայնության, ինչպես նաև

(b) չօգտագործել ՄՖԿ-ի անվանումը, նշանները կամ լոգոները որևէ հայտարարությունում, գովազդային գրականությունում կամ տեղեկատվությունում առանց ՄՖԿ-ի նախնական գրավոր համաձայնության, իսկ նման համաձայնություն ստանալու դեպքում, օգտագործել ՄՖԿ-ի անվանումը, նշանները և լոգոները տրված թույլտվության պայմաններին համապատասխան և ՄՖԿ-ի կողմից պահանջվող պատասխանատվության սահմանափակման

վերաբերյալ դրույթների ներառմամբ:

4. **Disclaimers.**

(a) IFC makes no express or implied representation or warranty as to the accuracy, completeness or sufficiency of any reports, analyses or memoranda prepared by, or with the assistance of, IFC or the Consultant.

(b) The Ministry agrees that all information disclosed or to be disclosed by the Ministry to IFC in accordance with the terms of Part I of this Agreement (“Project Specific Terms”) is true and accurate. IFC will rely on, though IFC will not independently verify, the accuracy and completeness of the information that the Ministry supplies to IFC, and it is the responsibility of the Ministry to inform IFC of any changes in the information presented to IFC.

(c) IFC shall not be liable for any loss, damage or liability that the Ministry or any third party may suffer or incur as a result of (i) any document prepared by, or with the assistance of, IFC or the Consultant or (ii) any advice or recommendation given or made by IFC or the Consultant, unless a court of competent jurisdiction determines by final judgment that such loss, damage or liability was the result of gross negligence or willful misconduct on the part of IFC.

5. **Delays.**

Except with respect to any obligation to pay amounts due under the terms of this Agreement, neither Party shall be liable to the other for any delay or failure to fulfill its obligations under this Agreement to the

4. **Պատասխանատվության սահմանափակման վերաբերյալ դրույթներ.**

(a) ՄՖԿ-ն ուղղակիորեն կամ ոչ էլ ենթադրաբար չի տրամադրում որևէ երաշխիք կապված իր կամ Խորհրդատուի կողմից կամ աջակցությամբ պատրաստված հաշվետվությունների, վերլուծությունների կամ հուշագրերի ճշգրտության, ամբողջականության կամ բավարար լինելու վերաբերյալ:

(b) Նախարարությունը համաձայնվում է, որ իրենց կողմից սույն Համաձայնագրի Մաս I-ում նախատեսված կարգով (այսուհետ՝ Ծրագրին հատուկ պայմաններ) ՄՖԿ-ին տրամադրված կամ տրամադրվելիք ցանկացած տեղեկատվություն ճիշտ և ճշգրիտ է: ՄՖԿ-ն հիմնվելու է Նախարարության կողմից տրամադրված տեղեկատվության վրա և ինքնուրույնաբար չի ստուգելու դրա ամբողջականությունը կամ ճշգրտությունը, Նախարարության պարտավորությունն է տեղյակ պահել ՄՖԿ-ին՝ տրամադրված տեղեկատվության մեջ փոփոխությունների ի հայտ գալու մասին:

(c) ՄՖԿ-ն պատասխանատվություն չի կրում Նախարարության կամ երրորդ անձի նկատմամբ կրած կորստի, վնասի կամ պատասխանատվության համար, որոնք առաջացել են (i) ՄՖԿ-ի կամ Խորհրդատուի կողմից կամ աջակցությամբ մշակված որևէ փաստաթղթի, կամ (ii) ՄՖԿ-ի կամ Խորհրդատուի կողմից տրված որևէ խորհրդի կամ առաջարկության հետևանքով, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավասու դատարանի վերջնական վճռով որոշվում է, որ այդպիսի կորուստը, վնասը կամ պատասխանատվությունն առաջացել է ՄՖԿ-ի կողմից դիտավորության կամ անփութության հետևանքով:

5. **Ուշացումներ.**

Բացառությամբ սույն Համաձայնագրով նախատեսված գումարների վճարումներին, Կողմերից ոչ մեկը պատասխանատվություն չի

extent that any such delay or failure arises from causes beyond its control, including but not limited to, fire, floods, acts of God, acts or regulations of any governmental or supranational authority, war, riot, strike, lockout or industrial disputes.

կրում մյուսի նկատմամբ սույն Համաձայնագրով նախատեսված ցանկացած պարտականության ուշացման կամ չկատարման համար, եթե նման ուշացում կամ չկատարում ի հայտ է եկել իր վերահսկողությունից դուրս իրադարձությունների հետևանքով՝ ներառելով, սակայն չսահմանափակվելով՝ հետևյալ իրադարձություններով՝ հրդեհ, ջրհեղեղ, տարերային աղետներ, կառավարական կամ այլ վերագրային իշխանության կողմից ընդունված որոշումներ, պատերազմ, ապստամբություն, գործադուլ, շրջափակում կամ աշխատանքային վեճեր:

6. **Confidentiality/Access to Information.**

(a) The Parties agree that IFC's Access to Information Policy (the "Policy") will apply with respect to all documentation, data and other information that IFC receives from the Ministry or third parties relating to the Ministry's business and the Project. Pursuant to the Policy, IFC does not disclose to the public financial, business, proprietary or other non-public information provided to IFC by its Ministry or third parties without the consent of such Ministry or third parties. Under the Policy, IFC does make available to the public certain information about IFC's activities. Examples of such information include, with respect to IFC's advisory services activities, good practices or lessons learned reports that aim to enhance the development impact of IFC's initiatives, and limited project-specific information, such as brief project descriptions, expected development impacts and actual results. The Policy is available on IFC's web site at www.ifc.org/Disclosure.

6. **Գաղտնիություն/Տեղեկատվության հասանելիություն.**

(a) Կողմերը համաձայնվում են, որ ՄՖԿ-ի «Տեղեկատվության հասանելիության քաղաքականության» (այսուհետ՝ Քաղաքականություն) դրույթները տարածվում են ՄՖԿ-ի կողմից ստացվող ողջ տեղեկատվության, սովյալների և այլ տեղեկությունների նկատմամբ, որը ՄՖԿ-ն ստանում է Նախարարության կամ երրորդ կողմից՝ Նախարարության գործունեության և Ծրագրի վերաբերյալ: Քաղաքականության դրույթների համաձայն՝ ՄՖԿ-ն հանրության համար հասանելի չի դարձնում իր հաճախորդների կամ երրորդ անձանց կողմից տրամադրված ֆինանսական, գործարար, գույքային կամ ոչ հանրորեն մատչելի այլ տեղեկատվությունը՝ առանց այդ հաճախորդների կամ երրորդ կողմերի համաձայնության: Քաղաքականության դրույթների համաձայն՝ ՄՖԿ-ն հանրության համար հասանելի է դարձնում իր կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ որոշակի տեղեկություններ: ՄՖԿ-ի խորհրդատվական ծառայությունների մասով նմանատիպ տեղեկության օրինակ են հանդիսանում լավ փորձ և քաղած դասեր պարունակող հաշվետվությունները, որոնք նպատակ ունեն ուժեղացնել ՄՖԿ-ի նախաձեռնությունների զարգացման ազդեցությունը և ծրագրին վերաբերող սահմանափակ տեղեկությունները, ինչպիսիք են՝ ծրագրի համառոտ նկարագրությունները, սկնկավորող զարգացման ազդեցությունը և փաստացի արդյունքները: Քաղաքականությունը

տեղադրված է ՄՖԿ-ի կայքում՝
www.ifc.org/Disclosure:

(b) In accordance with the Policy, IFC has disclosed information about the overall IFC project (of which this Project forms a part) through IFC's Advisory Services Project information document ("ASPI"), by placement in on IFC's external project disclosure website (see www.ifc.org and click on IFC Projects/Disclosure). The text of the ASPI, updated to include information about this Project, is attached as Annex C.

(c) The ASPI will be updated from time to time, when additional Ministries are added to the overall IFC project and at least annually to reflect development results in accordance with Annex C. In the event the ASPI needs to be revised to reflect material changes in the overall project description, expected development impacts or increased environmental or social risks, IFC will notify the Ministry in writing of the proposed updates prior to public release.

(b) Քաղաքականության դրույթների համաձայն ՄՖԿ-ն տեղեկատվություն կտրամադրի ծրագրերի վերաբերյալ (որի մասն է կազմում սույն Ծրագիրը), ՄՖԿ-ի Խորհրդատվական ծրագրերի տեղեկատվական փաստաթղթի (ASPI) միջոցով՝ այն տեղադրելով ՄՖԿ-ի կայքում (տես՝ www.ifc.org և սեղմիր ՄՖԿ-ի ծրագրեր/Տեղեկատվություն): ASPI տեքստը՝ որն թարմացվել է, ներառելով տեղեկատվություն սույն ծրագրի մասին, ներկայացվում է Հավելված Գ-ում:

(c) ASPI-ի տեքստը կթարմացվի ժամանակ առ ժամանակ և առնվազն տարին մեկ անգամ, որպեսզի ներառի Հավելված Գ-ում սահմանված զարգացման արդյունքները: Այն դեպքում, երբ ASPI-ն վերանայվում է ծրագրի ընդհանուր նկարագրությունում էական փոփոխությունները կատարելու, ակնկալվող զարգացման արդյունքները կամ աճող բնապահպանական կամ սոցիալական ռիսկերը ներառելու համար, մինչև հանրության համար տեքստը հասանելի դարձնելը, ՄՖԿ-ն առաջարկվող փոփոխությունների մասին գրավոր կտեղեկացնի Նախարարությանը:

7. **No Partnership, Joint Venture or Investment Commitment.**

(a) Each of the Parties acknowledges and agrees that it is not the purpose of this Agreement to create a partnership, joint venture or similar arrangement whereby the Parties could be held jointly liable vis-a-vis third parties or for any other purposes.

(b) Nothing herein shall constitute a commitment by IFC to provide the Ministry with financing in respect of the Project or otherwise.

7. **Գործընկերություն, համատեղ ձեռնարկություն չստեղծելը կամ ներդրումային հանձնառություն չստանձնելը.**

(a) Կողմերն ընդունում և համաձայնում են, որ սույն Համաձայնագրի նպատակը չէ գործընկերություն, համատեղ ձեռնարկություն կամ նմանատիպ նախաձեռնություն ստեղծելը, որի դեպքում Կողմերը կարող են համատեղ պատասխանատվություն կրել որևէ երրորդ կողմի առջև կամ որևէ այլ նպատակով:

(b) Սույն Համաձայնագրի որևէ դրույթ չի ստեղծում ՄՖԿ-ի համար որևէ պարտավորվածություն՝ Ծրագրի իրականացման կամ այլ նպատակով ֆինանսավորում հատկացնել Նախարարությանը:

8. **Termination.**

8. **Դադարեցում.**

(a) Each of the Parties shall have the right to terminate this Agreement, without cause, by giving the other written notice at least thirty (30) calendar days prior to the effective date of termination. If the Ministry terminates without cause, the terminating party agrees that it will pay IFC promptly (and in any event within thirty (30) calendar days of IFC's written request) for IFC's involvement in the Project up to the time of termination for all IFC's costs (including, but not limited to, travel, accommodation, subsistence and communication) incurred by IFC staff.

(b) The Parties agree that, in the event that one of the Parties terminates the Agreement without cause pursuant to subsection (a) above, the non-terminating Party shall have the option to continue the Project on its own (or with such other parties with which it may enter into agreement) without any further obligation to whichever of the Parties terminates this Agreement.

(c) Upon thirty (30) calendar days' prior written notice, either Party may terminate this Agreement as a result of the failure by the other to fulfill any obligation hereunder.

(d) IFC may suspend or terminate this Agreement upon thirty (30) calendar days' written notice if (i) at any time IFC reasonably believes that any direct recipient of IFC's funds contributed to the Project has engaged in Sanctionable Practices in connection with the use of IFC's funds for the Project; or (ii) at any time IFC reasonably believes, after consultation with the Ministry that the Project cannot be carried out in a manner that would be materially consistent with the IFC Sustainability Framework and the IFC Performance Standards. More information

(a) Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի, առանց պատճառաբանության, դադարեցնել սույն Համաձայնագիրը՝ դադարեցման փաստացի օրվանից երեսուն (30) օրացուցային օր առաջ գրավոր կերպով տեղեկացնելով այդ մասին մյուս Կողմին: Համաձայնագիրը, առանց պատճառաբանության, Նախարարության կողմից դադարեցնելու դեպքում, դադարեցնող կողմը համաձայնվում է ՄՖԿ-ին անհապաղ (և ցանկացած դեպքում՝ ՄՖԿ-ի գրավոր պահանջը ստանալու օրվանից երեսուն (30) օրացուցային օրվա ընթացքում) վճարել մինչև դադարեցման պահը Ծրագրում ներգրավվելու կապակցությամբ ՄՖԿ-ի բոլոր ծախսերը (ներառելով, սակայն չսահմանափակվելով գործուղման, գիշերակացի, օրապահիկի և հաղորդակցության ծախսերը), որոնք կատարվել են ՄՖԿ-ի աշխատակազմի կողմից:

(b) Կողմերը համաձայնվում են, որ սույն Համաձայնագիրը Կողմերից որևէ մեկի կողմից, առանց պատճառաբանության, վերանշյալ (ա) ենթակետով նախատեսված կարգով դադարեցնելու դեպքում, դադարեցումը չնախաձեռնած Կողմը կարող է ինքնուրույնաբար (կամ այլ կողմի հետ, որի հետ սվյալ Կողմը կկնքի համաձայնագիր) շարունակել Ծրագիրը՝ Համաձայնագրի դադարեցման արդյունքում չառաջացնելով որևէ հետագա պարտավորություն Կողմերից որևէ մեկի համար:

(c) Երեսուն (30) օրացուցային օր առաջ նախնական զգուշացում տրամադրելով՝ Կողմերից յուրաքանչյուրը կարող է դադարեցնել սույն Համաձայնագիրը՝ մյուս Կողմի սույն Համաձայնագրով նախատեսված իր պարտականությունները ոչ պատշաճ կերպով կատարելու պատճառով:

(d) Երեսուն (30) օրացուցային օր առաջ նախնական զգուշացում տրամադրելով՝ ՄՖԿ-ն կարող է դադարեցնել կամ կասեցնել սույն Համաձայնագիրը, եթե (i) ՄՖԿ-ն ցանկացած պահին հիմքեր ունի հավատալու, որ իր կողմից Ծրագրին հատկացված միջոցներն ուղղակիորեն ստացող որևէ կողմ՝ այդ միջոցների օգտագործման կապակցությամբ ներգրավվել է Պատժամիջոցներ նախատեսող գործելակերպերում, կամ (ii) ՄՖԿ-ն Նախարարության հետ խորհրդակցելուց հետո

about Sanctionable Practices and IFC's Sustainability Framework and Performance Standards is available on IFC's web site at www.ifc.org/SanctionablePractices and www.ifc.org/wps/wcm/connect/Topics_Ext_Content/IFC_External_Corporate_Site/Sustainability+and+Disclosure/Environmental-Social-Governance/Sustainability+Framework/.

հիմքեր ունի հավաստալու, որ Ծրագիրը չի կարող իրականացվել ՄՖԿ-ի Կայունության ապահովման փաստաթղթի և ՄՖԿ-ի Գործունեության չափորոշիչների հիմնական դրույթների համաձայն: Պատժամիջոցներ նախատեսող գործելակերպերի և ՄՖԿ-ի Կայունության ապահովման փաստաթղթի և Գործունեության չափորոշիչների վերաբերյալ մանրամասն տեղեկատվությանը կարելի է ծանոթանալ ՄՖԿ-ի կայքում, հետևյալ հղումներում՝ www.ifc.org/SanctionablePractices և www.ifc.org/wps/wcm/connect/Topics_Ext_Content/IFC_External_Corporate_Site/Sustainability+and+Disclosure/Environmental-Social-Governance/Sustainability+Framework/.

(e) Nothing included in subsections (c) or (d) above shall be construed as a waiver of any remedy which may be available pursuant to applicable laws.

(e) (գ) և (դ) ենթակետերում նշված ոչ մի դրույթ չի կարող դիտարկվել որպես հրաժարում համապատասխան օրենսդրությամբ նախատեսված միջոցների կիրառման համար:

(f) Notwithstanding anything herein or elsewhere in this Agreement to the contrary, the provisions of the following Sections shall survive termination of this Agreement: In Part I, Sections 5 (*Intellectual Property Rights*) and 7 (*Project Data and Results Reporting*); in Part II, Sections 2 (*Reports and Documents*); 3 (*Representation of IFC's Views and Use of IFC's Name, Marks and Logo*); 4 (*Disclaimers*); 6 (*Confidentiality/Access to Information*); 8 (*Termination*); 9 (*Settlement of Disputes*) and 13 (*English Version Prevails*).

(f) Անկախ սույն ենթակետում կամ սույն Համաձայնագրի որևէ կետում նշված դրույթների, հաջորդիվ նշված դրույթները չեն կորցնում իրենց ուժը Համաձայնագրի դադարեցումից հետո՝ սույն Համաձայնագրի հիմնական տեքստի Մաս I, բաժին 5 (*Մտավոր սեփականության իրավունքներ*) և 7 (*Ծրագրի տեղեկություններ և արդյունքների հաշվետվություններ*), Մաս II, բաժին 2 (*Ձեկույցներ և փաստաթղթեր*), 3 (*ՄՖԿ-ի տեսակետների ներկայացնելը, անվան, նշանի և լոգոյի օգտագործումը*), 4 (*Պատասխանատվության սահմանափակման վերաբերյալ դրույթներ*), 6 (*Գաղտնիություն/Տեղեկատվության հասանելիություն*), 8 (*Դադարեցում*), 9 (*Վեճերի լուծման կարգը*) և 13 (*Անգլերեն տարբերակի գերակայում*):

9. Settlement of Disputes.

9. Վեճերի լուծման կարգը.

(a) The Parties undertake to endeavor in good faith to resolve any differences and disputes arising under, or in connection with, this Agreement by amicable settlement.

(a) Կողմերը պարտավորվում են բարիդրացիորեն ձգտել լուծել սույն Համաձայնագրի շրջանակներում ծագած բոլոր տարաձայնությունները և վեճերը բանակցությունների միջոցով:

(b) Absent amicable settlement, all disputes arising out of or in connection with this Agreement shall

(b) Բանակցությունների միջոցով վեճերի լուծման անհնարինության դեպքում սույն

be finally settled under the Rules of Arbitration of the International Chamber of Commerce (the "Rules") by one or more arbitrators appointed in accordance with the Rules. The place of arbitration shall be London, and the language of the arbitration shall be English.

(c) The Ministry acknowledges and agrees that no provision of this Agreement or of the Rules, nor the submission to arbitration by IFC, in any way constitutes or implies a waiver, renunciation, termination, or modification by IFC of any of IFC's privileges, immunities or exemptions granted in IFC's Articles of Agreement, or under international convention or any applicable law.

Համաձայնագրի շրջանակներում ծագած բոլոր վեճերը վերջնականապես պետք է լուծվեն Միջազգային առևտրի պալատի արբիտրաժային կանոնների համաձայն (այսուհետ՝ Կանոններ)՝ մեկ կամ մի քանի արբիտրաժային դատավորների նշանակմամբ: Արբիտրաժի վայրը Լոնդոն քաղաքն է, արբիտրաժի լեզուն՝ անգլերենը:

(c) Նախարարությունը ընդունում և համաձայնվում է, որ սույն Համաձայնագրի կամ Կանոնների որևէ դրույթ, ինչպես նաև ՄՖԿ-ի կողմից արբիտրաժային դատարան դիմելու փաստը չեն կարող հիմք հանդիսանալ ՄՖԿ-ի կողմից Համաձայնագրի Հողվածների, միջազգային պայմանագրերով կամ օրենսդրությամբ իրեն շնորհված իրավունքներից կամ արտոնություններից հրաժարում, դրանց ուժը կորցրած ճանաչում, դադարեցում կամ դրանց փոփոխություն:

10. **Amendments.**

Any amendment or waiver of, or any consent given under, any provision of this Agreement shall be in writing and, in the case of an amendment, shall be effective only if signed by both Parties.

10. **Փոփոխությունները.**

Սույն Համաձայնագրի շրջանակներում ցանկացած փոփոխություն, դրույթի ուժը կորցրած ճանաչում կամ համաձայնություն պետք է կատարվի գրավոր կերպով և ուժի մեջ մտի միայն Կողմերի կողմից ստորագրվելուց հետո:

11. **Successors and Assignees.**

This Agreement binds and benefits the respective successors and assignees of the Parties, provided that neither Party may assign this Agreement in whole or in part without the prior written consent of the other.

11. **Հետնորդներ և իրավահաջորդներ.**

Սույն Համաձայնագիրը պարտավորեցնում և արտոնություններ է շնորհում Կողմերի համապատասխան հետնորդներին և իրավահաջորդներին, պայմանով որ Կողմերից ոչ մեկը չի կարող այլ անձի փոխանցել սույն Համաձայնագիրն ամբողջությամբ կամ մասամբ՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

12. **Entire Agreement and Counterparts.**

(a) This Agreement, together with all its Annexes, constitutes the entire agreement between the Parties and supersedes any and all prior agreements, understandings and arrangements, oral or written, between them with respect to the subject matter hereof. If any provision of this Agreement shall be held to be invalid, illegal or unenforceable, the validity of all other provisions hereof shall in no way be affected thereby, and this Agreement shall be construed and be

12. **Համաձայնագրի ամբողջականությունը և օրինակները.**

(a) Սույն Համաձայնագիրը՝ իր բոլոր հավելվածներով, հանդիսանում է Կողմերի միջև ամբողջական համաձայնություն և փոխարինում է Կողմերի միջև նախկինում ինդրո առարկայի շուրջ ունեցած գրավոր կամ բանավոր ցանկացած և բոլոր համաձայնությունները, փոխըմբռնման հուշագրերը և պայմանավորվածությունները: Եթե սույն

enforceable as if such invalid, illegal or unenforceable provision had not been included in this Agreement.

(b) This Agreement may be executed in several counterparts, each of which is an original, but all of which constitute the same agreement.

13. **English Version Prevails.**

The Parties hereby acknowledge and agree that the English version of this document shall be the governing version and shall in all cases prevail over the Armenian translation which is provided for reference only.

14. **Entry into Force**

This Agreement shall be effective as of the date of signing by both Parties to this Agreement.

(Signature Page Follows)

Համաձայնագրի որևէ դրույթ ճանաչվի ուժը կորցրած, ոչ օրինական կամ ոչ կիրառելի, դա որևէ կերպ չպետք է ազդի բոլոր մյուս դրույթների ուժի մեջ լինելու վրա, և սույն Համաձայնագիրը պետք է մեկնաբանվի ու կիրառվի այնպես, իբրև սույն Համաձայնագիրը երբևիցե չի պարունակել այդ ուժը կորցրած, ոչ օրինական կամ ոչ կիրառելի դրույթները:

(b)Սույն Համաձայնագիրը կարող է ստորագրվել է մի քանի օրինակից, որոնցից յուրաքանչյուրը հանդիսանում է բնօրինակ, իսկ դրանք բոլորը կազմում են նույն համաձայնագիրը:

13. **Անգլերեն տարբերակի գերակայում.**

Կողմերն ընդունում և համաձայնվում են, որ սույն փաստաթղթի անգլերեն տարբերակը հանդիսանում է գերակայող տարբերակ և ցանկացած դեպքում այն պետք է գերակայի հայերեն թարգմանության նկատմամբ, որը տրամադրվում է բացառապես հղման նպատակով:

14. **Ուժի մեջ մտնելը**

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից:


(հաջորդիվ՝ ստորագրությունների էջ)


IN WITNESS WHEREOF, the Ministry and IFC have caused this Agreement to be signed in their respective names as of the date first above written.

Ի վկայություն ընդհանուր, Նախարարությունը և ՄՖԿ-ն ստորագրեցին սույն Համաձայնագիրը՝ իրենց համապատասխան անուններով՝ վերը հիշատակված ամսաթվով:

THE GOVERNMENT OF THE REPUBLIC OF ARMENIA represented by THE MINISTRY OF ECONOMIC DEVELOPMENT AND INVESTMENTS OF THE REPUBLIC OF ARMENIA

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ՝ ի դեմս ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

By : 

Ստորագրություն՝ 

Name: Tigran Khachatryan


Անուն, Ազգանուն՝ Տիգրան Խաչատրյան


Title : Minister

Պաշտոն՝ Նախարար

INTERNATIONAL FINANCE CORPORATION

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱ

By : 

Ստորագրություն՝ 

Name: Jan Van Bilsen

Անուն, Ազգանուն՝ Յան Վան Բիլսեն

Title : Regional Manager South Caucasus

Պաշտոն՝ Տարածաշրջանային ղեկավար, Հարավային Կովկաս

International Finance Corporation
Միջազգային ֆինանսական կորպորացիա
Sustainability Framework and Exclusion List
Կայունության ապահովման փաստաթուղթ և Բացառման ցանկ

Sustainability Framework
Կայունության ապահովման փաստաթուղթ

Introduction: /Ներածություն.

To help each of us pursue IFC's Mission in our day to day business, we are guided by our environmental and social development principles. The principles are contained in the IFC Sustainability Framework, which is comprised of the following elements:

Մեր ամենօրյա գործունեությունում ՄՖԿ-ի առաքելությունն իրագործելու գործում մեզանից յուրաքանչյուրին օգնելու նպատակով՝ մենք առաջնորդվում ենք բնապահպանական և սոցիալական զարգացման սկզբունքներով: Այդ սկզբունքներն ամրագրվում են ՄՖԿ-ի Կայունության ապահովման փաստաթղթում, որը բաղկացած է հետևյալ տարրերից՝

- *Sustainability Policy/Կայունության ապահովման քաղաքականություն*
- *Performance Standards /Գործունեության չափորոշիչներ*
- *Access to Information Policy/Տեղեկատվության հասանելիության քաղաքականություն*
- *EHS Guidelines /Բնապահպանական, առողջապահական և անվտանգության ուղեցույցներ (ԲԱՍ ուղեցույցներ)*
- *Guidance Notes /Ուղղորդող ծանոթություններ*
- *Good Practice Materials /Լավ փորձի նյութեր*

More information about the IFC Sustainability Framework may be obtained by visiting <http://www.ifc.org/sustainability>.

ՄՖԿ-ի Կայունության ապահովման փաստաթղթի վերաբերյալ մանրամասն տեղեկատվությանը կարելի է ծանոթանալ հետևյալ կայքում՝ <http://www.ifc.org/sustainability/>

Performance Indicators for the Project and Reporting Requirements

Ծրագրի կատարողականի ցուցանիշներ և հաշվետվության նկատմամբ պահանջներ

The following table sets forth the Project Components and the Performance Indicators for the Project, together with the frequency of reporting by the Ministry on the Indicators. For any reporting period, the Ministry should use this table to provide IFC with the relevant Project results for that period (not cumulatively from commencement of the Project).

Սույն աղյուսակը սահմանում է Ծրագրի բաղադրիչները և ցուցանիշները, ինչպես նաև Նախարարության կողմից դրանց վերաբերյալ հաշվետվություն տրամադրելու հաճախականությունը: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակահատվածի համար Նախարարությունը պետք է օգտվի այս աղյուսակից, որպեսզի ՄՖԿ-ին տրամադրի Ծրագրի արդյունքների (սկսած Ծրագրի մեկնարկից՝ ոչ կուտակային արդյունքներ) վերաբերյալ տեղեկատվություն:

By submitting this completed table to IFC on the relevant due dates, the Ministry acknowledge and agree that the information provided may be publicly disclosed by IFC under its Access to Information Policy.

Լրացված աղյուսակը համապատասխան օրերին ՄՖԿ-ին տրամադրելով՝ Նախարարությունը ընդունում և համաձայնվում է, որ տրամադրված տեղեկատվությունը կարող է հրապարակվել ՄՖԿ-ի կողմից՝ վերջինիս Տեղեկատվության հասանելիության քաղաքականության պահանջների համաձայն:

Project Component/ Ծրագրի բաղադրիչը	Performance Indicator/ Կատարողականի ցուցանիշը	Publicly Disclosable?: Y or N/ Հրապարակային է, Այո կամ Ոչ	Results for Reporting Period/ Հաշվետու ժամանակահատվածի արդյունքները	Due Date or Frequency of Reporting/ Տրամադրման օրը կամ տրամադրման հաճախականությունը
Component 1 Բաղադրիչ 1	-Number of produced reports (assessments, surveys, manuals, etc)/ Զեկույցների քանակը (ուսումնասիրություններ, հետազոտություններ, ձեռնարկներ և այլն) -Number of workshops, training events, seminars, conferences, etc./ Ուսումնական միջոցառումների, դասընթացների, սեմինարների և այլ միջոցառումների քանակը -Number of participants in workshops, training events, seminars, conferences, etc./ Ուսումնական միջոցառումների, դասընթացների, սեմինարների, կոնֆերանսների մասնակիցների քանակը	Yes/Այո	Report/Զեկույց	Semi Annually (every June 30th, and Dec 31 st) Կիսամյակային (ամեն տարի հունիսի 30-ին և դեկտեմբերի 31-ին)

Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

Պետական մարմնի անվանումը՝ << ՏՀՆՆ

ՄԱՍ 1. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՈԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1. Հիմնական ռազմավարական նպատակները և գերակա վերջնական արդյունքները՝
Ծրագրի իրականացման արդյունքում նախատեսվում է ներդրումային միջավայրի բարելավման միջոցով ավելացնել ներդրումների (մասնավորապես՝ օտարերկրյա) ծավալը՝ ՕՈՒՆ/ՀՆԱ ավելացնել 0.4 տոկոսային կետով:
2. Բյուջետային ծրագրերում կատարվող հիմնական փոփոխությունները՝
Նոր բյուջետային ծրագիր
3. Կապիտալ բնույթի հիմնական միջոցառումները՝
Փոփոխություններ չեն նախատեսվում:
4. Ֆինանսական ակտիվների կառավարման անչվող միջոցառումները՝
Համաֆինանսավորում

Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

Պետական մարմնի գերատեսչական դասիչը	104004
Պետական մարմնի անվանումը	«ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն»

ՄԱՍ 3 ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԳԾՈՎ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Նպատակը	Ծրագրի դասիչը	Ծրագրի վերջնական արդյունքները			Թիրախը		Կապը ՀՀ կառավարության ծրագրով սահմանված քաղաքականության թիրախների հետ
		Չափորոշիչը	Ելակետը Ցուցանիշը	Ժամկետը	Ցուցանիշը	Ժամկետը	
Ներդրումների (օտարերկրյա) աճ	Խորհրդատվական և ծառայությունների տրամադրում	Օտարերկրյա ուղղակի ներդրումների կշիռը ՀՆԱ-ում	2.10%	2018թ	2.50%	2020թ.	«ՀՀ կառավարության՝ 8 փետրվարի 2019 թվականի N 65 – Ա ծրագրի «5.6. ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԱՃԸ՝ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՅՈՒՆ ԱՃԻ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ»

Հավելված N 3. Բյուջետային ծրագրերի և ակնկալվող արդյունքների ներկայացման ձևաչափ

Պետական մարմնի (ԲԳԿ)	104004
Պետական մարմնի (ԲԳԿ) անվանումը	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

ՄԱՍ 4. ՊԵՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳԾՈՎ ԱՐԴՅՈՒՆՔԱՅԻՆ (ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ) ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Ծրագրի դասիչը	Ծրագրի անվանումը
	<i>Խորհրդարանական ծառայությունների կրամատրում</i>

Ծրագրի միջոցառումները

Ամփոփ/բացված	Ամփոփ
Պետական մարմնի (կատարող) գերատեսչական դասիչը՝	104004
Պետական մարմնի (կատարող) անվանումը՝	ՀՀ ՏՁՆՆ

Ծրագրի դասիչը՝		Ցուցանիշներ								
Միջոցառման դասիչը՝		2018թ. փաստացի	2019թ սպասվող	2020թ եռամսյակ	2020թ կիսամյակ	2020թ ինն ամիս	2020թ տարի	2021թ	2022թ	<Լրացնել միջոցառման ավարտի տարեթիվը>
Միջոցառման անվանումը՝	Ներդրումային քաղաքականության բարելավում և արտահանման համար բարենպաստ միջավայրի ձևավորում									
Նկարագրությունը՝	Ներդրումային միջավայրի բարելավում									
Միջոցառման տեսակը՝	Համաֆինանսավորում									
Միջոցառումն իրականացնողի անվանումը՝	ՀՀ ՏԶՆՆ									
Արդյունքի չափորոշիչներ										
քանակական	Խորհրդատվություն			2	4	6	8			
	սեմինարներ			2	3	5	6			
	դասընթացներ,			2	3	4	5			
	վերլուծություններ			3	6	8	9			
Միջոցառման վրա կատարվող ծախսը (հազար դրամ)							75 000			

Աղյուսակ Ա.

Պետական մարմնի (ԲԳԿ) գերատեսչական դասիչը՝	104004
Պետական մարմնի (ԲԳԿ) անվանումը՝	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն

Պետական մարմնի պատասխանատվությամբ իրականացվող բյուջետային ծրագրերն ու միջոցառումների բացվածքն ըստ կատարող՝ պետական մարմինների

Ծրագրային դասիչը		Ծրագրի/ Միջոցառման/ կատարող հանդիսացող պետական մարմնի անվանումը	Գումարը (հազար դրամ)
Ծրագիր	Միջոցառում		
ԸՆԴԱՄԵՆԸ		ՀՀ ՏՀՆՆ	75 000